



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ
մեթոդները,

ՆԶՊ պարապմունքների անցկացման ձևերն ու

ուսուցման

սկզբունքները:

ԱՌԱՐԿԱ

ՆԶՊ

ՀԵՂԻՆԱԿ

Աշոտ Սարգսյան

ՄԱՐԶ

Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի N 9 հիմն.

դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	2
ՆԶՊ պարապմունքների անցկացման ձևերը-----	3
ՆԶՊ պարապմունքների անցկացման մեթոդները-----	4
Ուսուցման ժամանակակից /ինտերակտիվ/ մեթոդները -----	6
Օգտագործված գրականության ցանկ-----	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԶՊ առարկայի ուսուցումը հավասարապես նախատեսված է թե՛ տղաների, թե՛ աղջիկների համար:

Ժամանակակից պատերազմները մեծ նշանակություն են տալիս գերճշգրիտ միջոցներին, մարտական ռոբոտներին, կապի և տեղեկատվության ժամանակակից համակարգերին, ինֆորմացիոն-հոգեբանական միջոցառումներին: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո ծրագիրը վերանայվել է, ավելացել են «Մոբիլ ջոկատների մասին» և «Աշխարհագրի և կամավորական ջոկատների նշանակությունը և դրանց համագործակցությունը կանոնավոր բանակի հետ» թեմաները: «Պայքարը հակառակորդի ցածր թռչող ինքնաթիռների դեմ» թեման համալրվել է «Հակառակորդի անօդաչու թռչող սարքերի դեմ պայքարը և դրանցից պաշտպանվելը» ենթաթեմայով:

Նպատակն ու խնդիրները

ՆԶՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձևավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաև հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն):

ՆԶՊ պարապմունքների անցկացման ձևերը

Միջնակարգ դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է, որի ընթացքում կիրառվում են ուսուցման բազմազան մեթոդները: ՆԶՊ ծրագրով նախատեսված են հետևյալ տիպի պարապմունքների ձևեր՝ տեսական, գործնական, ցուցադրական, տակտիկական, տակտիկա-շարային, ստուգողական պարապմունքներ, սեմինարներ, լաբորատոր աշխատանք, խմբային պարապմունքներ:

Տեսական պարապմունքները /դասախոսություն, զրույց/ անցկացվում են բանավոր շարադրանքի միջոցով և պետք է պարունակեն ուսուցանվող թեմայի գիտական հիմքերը, բացահայտեն նյութի էական մասը, նպաստեն սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, արտացոլեն արդի տեսական և գործնական խնդիրները, գիտության և տեխնիկայի նվաճումները: Տեսական պարապմունքները հիմք են հանդիսանում այլ տիպի պարապմունքների և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման ու անցկացման համար:

Գործնական պարապմունքները նպատակ ունեն գործնականում ծանոթացնել և յուրացնել զինվորական տեխնիկան, սպառազինությանը, սարքավորումներին, դրանց օգտագործման, շահագործման, պահպանման կարգին, ձևավորել որոշակի հմտություններ, տարբեր տեսակի գործողություններ, նորմատիվներ կատարելու համար: Միևնույն ժամանակ գործնական պարապմունքների ընթացքում ամրապնդվում և կատարելագործվում են ունեցած տեսական գիտելիքները: գործնական պարապմունքները կարող են անցկացվել ցուցադրական բացատրությունների մարզումների միջոցով:

Գործնական պարապմունքների եզրափակիչ մասը տակտիկական պարապմունքներն են:

Տակտիկական պարապմունքները սովորեցնում են աշակերտներին, ուսանողներին կատարել իրենց ծառայողական պարտականությունները զինվորի, հետախույզի, դիտորդի դերում մարտական իրավիճակներում: Մտահղացմանը տակտիկական իրավիճակին համապատասխան մշակվում են ուսումնական հարցերը:

Տակտիկա-շարային պարապմունքները, որպես օրենք մախորդում են տակտիկական պարապմունքներին: Այն նպաստում է սովորողների մոտ մշակել որոշակի պայմաններում գործողությունների կատարման հմտություն:

Յուրաքանչյուր ուսումնական հարց ուսուցանվում է քայլ առ քայլ, ստեղծվում համապատասխան տակտիկական իրավիճակ:

Ստուգողական պարասյունքները անցկացվում են տեսական և գործնական գիտելիքների ստուգման և գնահատման նպատակով:

Ուսուցման մեթոդների խնդիրն է, թե ինչպես սովորեցնել: Ուսուցման մեթոդն ընտրելիս նախօրոք պետք է պարզել, թե ինչու համար, ինչ պետք է սովորեցնել և ում պետ է սովորեցնել: Ուսուցման մեթոդները դա սովորողների և սովորեցնողների կանոնավորված համատեղ աշխատանքի ձև է՝ ուղղված ուսուցման նպատակի կատարմանը, այսինքն սովորողներին կրթելու և դաստիարակելու համար:

Ուսուցման մեթոդները բազմազան են, որոնցից հիմնականներն են՝ բանավոր շարադրանքը /դասախոսություն, բացատրություն, պատմում/ զրույց, վարժություն /մարզում/ գործնական աշխատանք, ինքնուրույն աշխատանք, ուսուցման ծրագրավորված մեթոդ, պրոբլեմային /ենթադրական/, գիտելիքների և հմտությունների աստիճանական ձևավորման մեթոդ, մրցույթային, հենակետային համառոտագրությունով ուսուցման մեթոդ /Շատալովի մեթոդ/ և այլն:

ՆԶՊ պարապմունքների անցկացման մեթոդները

ՆԶՊ պարապմունքների անցկացման մեթոդներն են՝

ա/ Դասախոսությունը շարադրվող նյութի գիտա-տեսական վերլուծության ծավալուն հաղորդումն է: Դասախոսության հիմնական նպատակն է օգնել սովորողներին, նրանց հետագա ստեղծագործական աշխատանքին:

Դասախոսության մեջ շարադրվում են թեմայի առավել բարդ դրույթները, վերլուծվում են գրական աղբյուրները, տրվում են խորհուրդներ հետագայում նպատակասլաց թեմայի հետ աշխատելու համար:

Դասախոսություններում լայնորեն կիրառվում են ընդհանրացումներ, նկարագրութ - յուններ, օրինակներ, փաստերի վերլուծություններ:

բ/ Բացատրությունները դրանք երևույթների իմաստն է բացահայտումն են:

Դրանցում մեծ տեղ ունեն սպացույցները, հետևությունները, դատողությունները: Բացատրություններն ուղեկցվում են սպառազինության ու տեխնիկայի ցուցադրմամբ, դիդակտիկ պարագաների, գործողությունների ու հնարքների ցուցադրմամբ:

Գ Պատմումը ուսումնական նյութի կարճ ու պատկերավոր շարադրումն է, առավելապես փաստացի տվյալների հիման վրա: Պատմելու ընթացքում կիրառվում են նկարագրության, դատողությունների, եզրահանգումների ձևերը: Սովորաբար սևողությունները լինում է 20-30 րոպեից ոչ ավել, ուղեկցվում է բացատրություններով, դիդակտիկ նյութերի ցուցադրումով:

Զրույցը սովորողներին նոր գիտելիքներով հարստացնելու պարզ ու մատչելի մեթոդներից է: Այն հնարավորություն է ընձեռնում ուսումնական նյութի քննարկման համար, թույլ է տալիս ստուգել նախկինում ձեռք բերած գիտելիքները, դրանք սխառեմավորել և խորացնել:

Ուսուցման նպատակից կախված զրույցը կարող է լինել ծավալուն, ստուգողական, նոր գիտելիքների հաղորդման: Այն պետք է նախօրոք նախապատրաստել, որոշել նպատակը, խնդիրները բովանդակությունը:

Վարժությունները /մարզումներ/ գիտակցաբար, աստիճանաբար դժվարացող որոշակի գործողությունների, հնարքների կրկնությունն է, սովորողների մոտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու նպատակով: Վարժություններ կատարելիս սովորողները ձեռք են բերում գործնական ունակություններ զենքի, սպառազինության, մարտական տեխնիկայի հետ վերաբերվելու:

Գործնական աշխատանքը տեխնիկայի, սպառազինության, զենքի հետ վարվելու, սպասարկելու, խնամելու և պահպանելու կոնկրետ և կարևոր աշխատանք է:

Ինքնուրույն աշխատանքը ուղեկցվում է հրահանգների, ուղեցույցների, տեղեկատու գրականության կրկնությամբ: Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը մեծ չափով կախված է գինդեկի կողմից այն նախապատրաստելու մակարդակից, դրված խնդիրների ծավալից և նրա կողմից իրականացվող հսկողությունից:

Գործնականում ավելի հաճախ օգտագործվում են ուսուցման մեթոդները գուցորդված, որի ժամանակ կիրառվում են մի քանի մեթոդներ:

Օրագրավորված ուսուցման մեթոդը նախատեսում է ուսումնական նյութի ռացիոնալ մասնատում և ուսուցման ղեկավարի կողմից անընդհատ այդ մասերի յուրացման վերահսկում: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ուսումնական նյութը մատուցել առավել նպատակահարմար և հեշտ ընկալելի հաջորդականությամբ:

Գիտելիքների և հմտությունների աստիճանական ձևավորման մեթոդը նախատեսում է գործողությունների օրինակելի սխեմաների, գծագրերի, ուսումնական քարտեզների և այլ դիդակտիկ պարագաների օգտագործում, որոնց հիման վրա շարադրվում է գործնական աշխատանքի տրամաբանությունը: Այս մեթոդը լայնորեն կիրառվում է նոր տեխնիկայի և սպառազինության ուսուցման ժամանակ:

Հենակետային համառոտագրությունով ուսուցման մեթոդի էությունը կայանում է նրանում, որ սովորողներին տրվում է հենակետային դասախոսությունը, որում արտացոլվում են առավել կարևոր հարցերը, սահմանումները, նրանց միջև եղած կապերը, իսկ թեմայի յուրացումը կատարվում է ինքնապատրաստման ժամերին:

Ուսուցման ժամանակակից /ինտերակտիվ/ մեթոդները:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռք բերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են՝

1. Աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,
2. Աշակերտն ապավինում է ոչ այնքան իր հիշողության, որքան ինքնուրույն ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
3. Աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,

4. Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցություն, հաղորդակցական կարողություններ,
5. Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնելու կիրառել սովորածը,
6. ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Ինտերակտիվ մեթոդը ներառում է մի շարք մեթոդներ և մեթոդական հնարքներ, որոնք կարելի է բնութագրել որպես ԽԻԿ համակարգ:

Ուսուցման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ ***խթանման, իմաստի ընկալման և կշռադատման /ԽԻԿ/:***

Խթանման փուլ: Մտազրոհի կամ մտքերի տարափ: Մտազրոհը խմբի անդամների միջև աշխատանքի ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը ուսուցիչը որոշակի ժամանակում անհատապես կամ գույգերով կազմել է տալիս իրենց տեղեկատվությունը նոր հաղորդվելիք նյութի վերաբերյալ: Մտքերն ու գաղափարները գրի են առնվում գրատախտակին: Յուրաքանչյուր միտքը, թեկուզ անվստահ և վախվորած, խրախուսվում է: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ մասնակիցը անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց: Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է:

Պրիզմա: Պրիզմա մեթոդը ուսուցման ակտիվ մեթոդ է: Այն խրախուսում է սովորողներին անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտի եղած ասոցիատիվ կապերի վերահանումն ու արձագանքումն է:

Պրիզմա մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, կապ հաստատելով նրանց ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ կարելի է կազմել նաև անհատապես, բայց առավել արդյունավետ են խմբային աշխատանքները: Այս մեթոդի կիրառումը շատ ժամանակ չի խլում, այն անցնում է շատ արագ և աշխույժ:

Մեթոդն արդյունավետ է այն դեպքում, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումները: Հնարը ենթադրում է արագություն, արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների՝ իրար հաջորդող ու համաձայնեցված գործողություններ: Խմբային քննարկումների նման ձևով

կազմակերպումը ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:

Մտածիր-գույգ կազմիր-քննարկիր: Մա բավական պարզ, բայց արդյունավետ մեթոդական հնար է, որը նպաստում է աշակերտների մտածական հմտությունների զարգացմանը, նոր գաղափարների ի հայտ գալուն: Առաջին փուլում աշակերտները անհատապես մտածում են առաջադրանքի շուրջ: Երկրորդ փուլում իրենց տեսակետը քննարկում են դասարանի աշակերտներից որևէ մեկի հետ: Երրորդ փուլում նրանք իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին:

Չնակույտ: Այս մեթոդական հնարն ունի նախորդի տրամաբանությունը: Պաշտպանաբար դեպքում, զույգերով աշխատելուց հետո, արդեն երրորդ փուլում աշակերտները ոչ թե իրենց տեսակետները ներկայացնում են ամբողջ դասարանին, այլ շարունակում են աշխատել 4- հոգանոց խմբերում: Հնարավոր է նաև քննարկումը շարունակել 6 կամ 8- հոգանոց խմբերում: Սակայն ճիշտ կլինի, եթե 4-հոգանոց խմբերում քննարկումից հետո

անցկացվի համադասարանական քննարկում:

Բմաստի քննարկում

T-աձև աղյուսակ: T-աձև աղյուսակը ճկուն միջոց է՝ միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, ուր գրանցվում են միևնույն հասկացության կամ խնդրի հակառակ որակները, դրական կամ բացասական կողմերը, բերված են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկակի պատասխան /այո, ոչ, կողմ/դեմ կամ համադրության /հակադրության արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Այս աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ արդյունավետ կարելի է օգտագործել դասերի տարբեր փուլերում:

m-աձև աղյուսակ: m-աձև աղյուսակը ևս գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով T-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ, որը միևնույն հասկացության կամ խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք /դրական, բացասական, չեզոք/ արտահայտելու համար միջոց է: Այն նույնպես կարող է կիրառել անհատապես կամ խմբով աշխատելիս: Մա երեք բաժնից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ

դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումներ, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երեք տարբեր պատասխանների /այո/ոչ/չգիտեմ, կեղմ/դեմ/ձեռնապահ կամ համադրություն/հակադրություն/ չեզոք վերաբերմունք արտահայտող արձագանքների գրառման համար:


Օրինակ, աշակերտները կարող են ևս մեկ անգամ անդրադառնալ T-աձև աղյուսակում ամփոփված խնդրին և վերանայել իրենց վերաբերմունքը՝ երկու բևեռներից բացի մի երրորդ՝ չեզոք դիրքորոշմամբ դիտարկելով այն:

Դրական կողմեր	Չեզոք կողմեր	Բացասական կողմեր


m-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածել թե՛ անհատական աշխատանքի, թե՛ խմբային քննարկումների ժամանակ:

Հասկացությունների քարտեզ: Հասկացությունների քարտեզ /concepts map/ կոչվող այս հնարը մասնագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում է նաև գաղափարների քարտեզ կամ հասկացությունների քարտեզագրում անվանումներով: «Քարտեզը» սկսում են կազմել հետևյալ կերպ: Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը:

Քարտեզի «ճյուղերը» տարածվում են նաև ցանկացած ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է «ծնող բառի» հետ, իսկ միևնույն «ծնողն» ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ /ինչպես նշված է գծագրի Ա-ով նշված ճյուղում/:



Վեննի դիագրամ: Վեննի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով:



Շրջագայություն պատկերասրահում: Ընդհանուր նկարագրություն: Մեթոդի նպատակն է՝ փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի ներկայացնելու հմտություններ:

Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբի տալիս դրանցից մեկն ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:

Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա /ցանկալի է, որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջարկվեն և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ: Բոլոր աշխատանքները փակցվում են պատերին, և ստեղծվում է պատկերասրահ:

Խմբերի ներսում աշխակերտները հաշվում են մինչև 4-ը, կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների / դասարան «1» համարները մի խումբ, «2»-ները՝ ուրիշ խումբ և այլն/:

Այս նոր խմբերը շրջանում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն կատարում լրացումներ կամ ուղղումներ: «Շրջագայությունն» ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

Խճանկար /Ջիգոս, Jigsaw/: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է. Որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտ, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Խճանկար մեթոդը բաժանվում է հետևյալ փուլերի.

Փուլը	Նկարագրությունը
Նյութի ուսումնասիրությունը և տեղեկատվության հավաքումը	Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում են, հարստացնում իրենց նյութերը:
Աշխատանք հենակետային խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:

Ավարտական աշխատանք	Աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է ամբողջ թեման:
Ամփոփում	Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Կշռադատման փուլ:

Խորանարդում: Խորանարդումը մեթոդական հնար է, որն օգնում է հարցը դիտարկել տարբեր տեսանկյուններից: ԱՅս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ էունենալ սովորաթուղթից կամ որևէ այլ նյութից պատրաստված խորանարդ /կողմի երկարությունը՝ 15-20 սմ/, որի նիստերից յուրաքանչյուրի վրա գրված են առաջադրանքի կատարման հետևյալ կողմնորոշիչները՝

- Նկարագրի՛ր:
- Համեմատի՛ր:
- Զուգորդի՛ր:
- Վերլուծի՛ր:
- Կիրառի՛ր
- Թեր և դեմ փաստարկներ բեր:

Սկզբում անհրաժեշտ է ներկայացնել ուսումնասիրվելիք առարկան, հասկացությունը կամ ձևակերպել առաջադրանքը: Ուսուցիչն այն կարող է գրել գրատախտակին եթե շատ պարզ է բանավոր հանձնարարել: Առաջադրանքի բնույթից կախված՝ աշխատանքը կարող է կատարվել բանավոր կամ գրավոր: Տրված առաջադրանքն ընդհանուր գծերով քննարկելու համար տրամադրվում է 2-4 րոպե ժամանակ: Ապա աշակերտներին ցուցում է տրվում, որ առարկայի կամ հասկացության մասին մտածեն ըստ խորանարդի նիստերին արված նշումների:

Սակայն երբեմն, երբ զգում ենք, որ նիստերի հերթականությունն էական չէ, կարելի է խնդրի ասպեկտներն ըստ խնդրի անհրաժեշտության քննարկել կամ դիտարկել միայն մեկ տեսանկյունից: Նիստերի հերթականությունը ամփոփման ժամանակ կարելի է ընտրել՝ ելնելով այն բանից, թե հատկապես ինչի մասին եք ուզում, որ աշակերտներին ավելի հանգամանորեն խոսեն: Խորանարդումը գործածելիս աշակերտներին ոգևորում է այն, որ ուսուցիչը ևս մասնակցում և գրի էառնում իր տարբերակները: Այս տեխնիկան օգտագործելիս միշտ կարելի է հաճելիորեն զարմանալ գաղափարների և մտքերի որակով ու բազմազանությամբ:

Խորանարդումը կարելի է կիրառել դասի թե՛ սկզբնական, թե՛ ամփոփման փուլերում: Հարկ է հիշել, որ այս մեթոդը կիրառելի է միայն ծանոթ թեմաների դեպքում: Այսինքն՝

թիրախ-հասկացությունը պետք է զգուշորեն ընտրվի:

Պետք է նկատի ունենալ, որ ինտերակտիվ մեթոդները և մեթոդական հնարքները դեռ երաշխավորվելիս ավարտուն ցանկի հավանականություն չեն կարող ունենալ: Ինտերակտիվ մեթոդների մասին կարելի է ավելի լայն պատկերացում կազմել՝ ուսումնասիրելով Ա. Արնաոյան և ուրիշներ հեղինակային խմբի՝ ուսուցիչների համար նախատեսված «Մասնագիտական զարգացման ձեռնարկը» /ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի հրատարակչություն, Երևան 2004թ./ և «Ինտերակտիվ մեթոդը նախնական գինվորական պատրաստության առարկայում» մոդելը, 2008թ. /հեղինակներ՝ Վ. Աստանյան և Վ. Առաքելյան/:

Զինդեկը և ռազմագիտության այլ մասնագետներն իրենց գործունեության ընթացքում պետք է ճիշտ օգտագործեն նաև ռազմագիտական տերմինները, սակայն պետք է իմանալ, որ առայժմ հստակորեն կանոնակարգված չէ ռազմական շատ տերմինների ու տերմինակապակցությունների կիրառությունը: Դրա հետևանքով ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ այսօրվա գիրք-ամսագրային արտադրանքի մեջ, հատկապես մամուլում և հեռուստատեսային հաղորդումներում ռազմական տերմիններն ու տերմինակապակցությունները կիրառվում են կամայականորեն, առանց իմաստը հասկանալու: Բացակայում է նաև միասնականությունը՝ միևնույն տերմինն օգտագործում են՝ ով ինչպես ցանկանում է: Դա վերաբերվում է հատկապես բաղադրյալ տերմիններին:

Ինտերակտիվ մեթոդը օգտագործելիս այս միտումը էլ ավելի կաճի, հնարավոր է դառնա ավելի անկանխատեսելի:

Որոշ չափով միասնականություն հաստատելու նպատակով դասագրքերի վերջում տրված է համառոտ բառացանկ, որն ընդգրկում է հիմնականում դասագրքերում օգտագործված տերմինները: Զինդեկի նպատակն է՝ բացատրել այդ տերմինների բովանդակությունը, իմաստը:

Բառացանկը հայ-ռուսերեն է այն նպատակով, որ իրենց գիտելիքները խորացնելու ցանկություն ունեցողները կարողանան օգտվել ռուսալեզու ռազմագիտական գրականությունից: Ներկայացնելով ավանդական և ինտերակտիվ մեթոդները՝ մենք, ըստ ՆՁՊ բաժինների, տալիս ենք որոշ թեմաների անցկացման պլանների տարբերակներ ինտերակտիվ մեթոդների օգտագործմամբ, ինչպես նաև թեմաներ՝ ավանդական մեթոդներով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական պրոցեսի նպատակին հասնելու, այսինքն ուսումնական նյութի հիմնավոր և գիտակցական յուրացման համար ուսուցման հիմքում պետք է դրված լինեն որոշակի դրույթներ, սկզբունքներ, որոնք ապահովեն սովորողների նկատմամբ միասնական մոտեցում, ներկայացնեն համապատասխան պահանջներ ուսուցման բովանդակությանը, ձևերին, մեթոդներին:

Վերջնարդյունք

Ժամանակակից մեթոդական գրականությունում որպես ուսուցման հիմնական սկզբունքներ են համարվում՝

- Գիտակցականության սկզբունք
- Դիտողականության սկզբունք
- Միստեմատիկության և հաջորդականության սկզբունք
- Մասշեղիության սկզբունք
- Կայունության սկզբունք
- Ակտիվության և ինքնուրույնության սկզբունք
- Գիտականության սկզբունք

Գիտակցականության սկզբունք: Ուսուցանողի առաջին հոգսը պետք է լինի այն, որ սովորողը միանգամայն պարզ ու լրիվ կերպով հասկանա այն ամենը, ինչ սովորում է: Յուրաքանչյուր սովորող պետք է ըմբռնի տերմինի, կանոնի, սահմանման ճիշտ իմաստը: Պետք է բացառվի մեխանիկական յուրացումը, նման գիտելիքները անկայուն են և քիչ օգտագործելի:

Դիտողականության սկզբունք: Դիտողական ուսուցումը կառուցվում է ոչ թե վերացական գաղափրների վրա, այլ սովորողների կողմից անմիջապես ընկալվող պատկերների վրա: Այդ պատկերները կարող են լինել իրական առարկաներ, ուսումնական ֆոտոնկարներ, գրաֆիկներ, գծագրեր, աղյուսակներ, սխեմաներ, քարտեզներ, մակետներ և այլն: Դիտողական միջոցները պետք է բավարար են մի քանի պայմանների՝ ցույց տան առարկան, նրա կարևոր մասերը, հատկությունները, կառուցվածքը:

Միստեմատիկության և հաջորդականության սկզբունք: Այս սկզբունքը կիրառվում է

ուսուցման ողջ ընթացքում: Պետք է ուսուցանվող նյութը շարադրել սիստեմավորված, նորն ուսումնասիրելիս հենվել նախորդ նյութի վրա, առանձնացնել գլխավորը, հաջորդաբար գնալ պարզից դեպի բարդը, հեշտից՝ դժվարին, գիտելիքներից՝ հմտությունների և կարողությունների:

Մասշեղիության սկզբունքը: Ուսուցանվող նյութը պետք է լինի մասշեղի բոլոր սովորողների համար, անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական ընդունակություններն ու կարողությունները:

Կայունության սկզբունքը: Գիտելիքներն այբան կայուն են, որքան գիտակցորեն է աշխատել ուսուցանվողը, որքան հարուստ են եղել մատուցվող նյութին վերաբերող դիտողական միջոցները: Սովորողների գործնական հմտություններն ու կարողությունները ձեռք են բերվում միայն կայուն գիտելիքներով:

Ակտիվության և ինքնուրույնության սկզբունք: Այս սկզբունքը նպատակ ունի զարգացնել սովորողների ինքնուրույն մտածողությունը, բարձրացնել ակտիվությունը, տարբեր պարագաներում հանդես բերել նախաձեռնություն, համարձակորն պատասխանատվություն վերցնել իր վրա:

Գիտականության սկզբունք: Այս սկզբունքը պահանջում է սովորողների կրթական և ժամանակակից գիտական մակարդակի համապատասխանություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդումյան, Լ.Հարությունյան, Ն.Ջաղինյան, Գ.Վարելլա; <<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդների գնահատում>>, Երևան, 2003

2. J.Dewey <<The relation of theory to practice in education>>, 1974

A.Bullock, P.Hawk; <<Developing a Teaching Portfolio>>, Ohio,

<https://drive.google.com/file/d/1xdlgX-UJTjmDyiB2WZvtv1f-vhaAJp9I/view?usp=sharing>